# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արարատ համայնք 15.08.2023թ.

2023թ. օգոստոսի 15-ին, ժամը 12.00 ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքում տեղի ունեցան հասարակական լսումներ՝ «ՋԻ ԹԻ ԲԻ ՄԹԻԼ» ՍՊԸ-ի կողմից սև մետաղի ջարդոնի վերամշակման գործարանի գնահատման հաշվետվության վերաբերյալ՝ 1-ին փուլ:

**Օրակարգ՝**

Հաշվետվության համառոտ ներկայացում

Հարցեր ու պատասխաններ

Ելույթներ

Որոշման ընդունում

Հասարակական լսումների մասնակիցների ցուցակը կցվում է:

**Արարատ համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող** Արսեն Հակոբյանը ներկայացրեց հանրային լսման նպատակը: Նշեց, որ իրականացվում է հանրային առաջին քննարկումը: Քննարկման վերաբերյալ ծանուցումը իրականացվել է **«Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»** ՀՀ Կառավարության N1325-Ն որոշման համաձայն, տեղադրվել է համայնքի էլեկտրոնային կայքէջում հանրային քննարկումներն իրականացնելուց տասն օր առաջ:

**Հ. Նիկողոսյանը՝ գնահատման հաշվետվության հեղինակ** - համառոտ ներկայացրեց գնահատման հաշվետվությունը:

ՀՀ-ում շահագործվող երկաթի հանքեր չկան, սակայն պողպատից ստացվող արտադրանքի պահանջարկը հանրապետությունում գնալով աճում է: Ինչը կախված է նաև Հանրապետությունում շինարարության ծավալի աննախադեպ աճի հետ, որի համար անհրաժեշտ հիմական նյութերից մեկը հանդիսանում է որակյալ և մատչելի գներով ամրանի (արմատուրայի) ձեռքբերումը: Ամրանը Հայաստանը հիմնականում ձեռք է բերում Ռուսաստանից, Ուկրաինայից, Պարսկաստանից, որոշ քանակն էլ արտադրվում է Հայաստանում: Ներդրվող տեխնոլոգիան և օգտագործվող սարքավորումները արդիական են:

Գազերը փոշուց մաքրման համար նախատեսվում է ճկափողային զտիչները, որոնց արդյունավետությունը կազմում է 99%, երկրորդ փուլում անհրաժեշտության դեպքում գազերի մաքրման համար կտեղադրվի թաց սկրուբեր: Արտանետման խողովակը նախատեսվում է 33մ բարձրություն, ինչի արդյունքում ապահովվելու է արտանետման ցրման բարձր արդյունավետություն: Գործարանում նախատեսվում է տեխնիկական ջրի շրջանառու համակարգ:

Գործունեության վերաբերյալ հնչեցին հարցեր, որոնց վերաբերյալ տրվեցին պատասխաններ:

Արարատ համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող – Չնայած ցանկացած արտադրություն պարունակում է արտանետումների հետ կապված ռիսկեր, այնուամենայնիվ պետք է նշել, որ արդիական տեխնոլոգիաները այսօր հնարավորություն են տալիս բնակելի տարածքներից շատ մոտ հեռավորության վրա կազմակերպել ցանկացած արտադրական, արդյունաբերական գործընթացներ, տվյալ պարագայում մենք շահագրգիռ ենք, որ մեր համայնքում ավելանան ներդրող ընկերությունները, զարգանա տնտեսությունը:

Մենք նույնպես ցանկանում ենք, որ գործարանն աշխատի մաքուր, որպեսզի հետո ներդրումներ չանենք բնակիչների առողջության վերականգնման ուղղությամբ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ

**Որոշեցին** համարել հանրային լսումը կայացած՝ նշելով, որ նոր աշխատատեղերը այսօր սոցիալական հիմնահարցերի լուծման համար շատ կարևոր է և կարևոր է նաև ցանկացած նախատեսվող և կազմակերպվող արտադրության պարագայում բացառել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը: Այսպիսով, համայնքը որոշեց հավանություն տալ, հուսալով, որ հաշվետվությունում ներկայացված տեղեկությունների համաձայն կպահպանվի շրջակա միջավայրի վրա ազդեցության նորմանները:

Համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա.Հակոբյան

«ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ՍՊԸ

տնօրեն՝ Ա. Արորա